



# Ինչպե՞ս բողոքել հոգեկան առողջության անկարողության հետ կապված բնակարանային հարցում խտրականության դեմ:

1. Ո՞րն է անկարողության վրա հիմնված  
խտրականությունը բնակարանային հարցում:

Եթե Դուք հոգեկան առողջության անկարողություն ունեք և գտնվում եք Կալիֆորնիայում, դուք, ըստ նահանգային և դաշնային օրենքի, իրավունքներ ունեք չենթարկվել խտրականության բնակարանի վաճառքի կամ վարձույթի հարցում:

Բնակարանային հարցում խտրականությունը կարող է ունենալ շատ ձևեր, ներառյալ.

- a. Բնակարանը վարձով չտալը կամ չվաճառելը անկարողություն ունեցող անձին,
- b. անկարողություն ունեցող տնվորի կամ դիմորդի նկատմամբ խտրական հայտարարություններ անելը, կամ
- c. կանոնների, ընթացակարգերի կամ մեթոդների ողջամիտ ձևափոխություններ չկատարելը:

## 2. Ինչպե՞ս կարող եմ բողոքել անկարողության հետ կապված բնակարանային հարցում խտրականության դեմ:

Երբեմբ բնակարանային հարցում հնարավոր խտրականության հետ կապված իրավիճակները դժվար է կառավարել: Դուք կարող եք ցանկանալ խնդրել ընկերոջը, ընտանիքի անդամին, գործի մենեջերին, առողջապահական ծառայություններ տրամադրողին կամ փաստաբանին օգնել Ձեզ լուծել հարցը տան տիրոջ կամ սեփականության սեփականատիրոջ հետ:

Եթե կարծում եք, որ Դուք տուժել եք անկարողության հետ կապված բնակարանային հարցում խտրականությունից, Դուք կարող եք.

### ***Աշխատել Տանտիրոջ, վաճառողի կամ անշարժ գույքի վաճառքի գործակալի հետ***

Եթե կարծում եք, որ տան տերը, վաճառողը կամ անշարժ գույքի վաճառքի գործակալը խտրականություն է կիրառել Ձեր դեմ, Դուք պետք է ասեք նրանց Ձեր մտահոգությունների մասին: Եթե նրանք չեն ցանկանում դրա մասին խոսել, ուղարկեք նրանց նամակ Ձեր մտահոգությունների մասին և նշեք ակնկալվող պատասխանի ամսաթիվը: Մինչ պաշտոնական բողոք ներկայացնելը փորձեք հարցը լուծել սկզբից նրանց հետ: Բնակարանային հարցերի արդար լուծմամբ զբաղվող Ձեր տեղական կազմակերպությունը կարող է անվճար կամ ցածր գներով ծառայություններ տրամադրել. որոնք կարող են ձեզ օգնել խուսափել դատական գործից: Դուք կարող եք գտնել բնակարանային հարցերի արդար լուծմամբ զբաղվող կազմակերպությունների ցանկը [www.fairhousing.com](http://www.fairhousing.com) կայքում:

### ***Ներկայացրեք Բողոք Աշխատանքային և բնակարանային հարցերի արդար լուծման Կալիֆորնիայի վարչություն***

Աշխատանքային և բնակարանային հարցերի արդար լուծման Կալիֆորնիայի վարչությունը (DFEH) դիտարկում է բնակարանային հարցերի արդար լուծմանը վերաբերող բողոքները: Դուք կարող եք բողոք ներկայացնել DFEH (800) 233-3212 (Տեքստային էկրանով հեռախոս (800)

700-2320) հեռախոսահամարով, կամ [www.dfeh.ca.gov](http://www.dfeh.ca.gov) կայքում: DFEH բողոքը պետք է ներկայացվի իրադարձության ամսաթվին հաջորդող **մեկ տարվա** ընթացքում:

***Ներկայացրեք Բողոք HUD-ին (Բնակարանային հարցերի և քաղաքաշինության ԱՄՆ Դեպարտամենտ)***

Բնակարանային հարցերի և քաղաքաշինության ԱՄՆ Դեպարտամենտը (HUD)-ը հետաքննում է բնակարանային հարցում խտրականության դեպքերը համաձայն դաշնային օրենքի: «Անկարողություններով անձանց վերականգնման մասին» օրենքի 504-րդ Բաժինը վերաբերում է պետության կողմից ֆինանսավորվող բնակարանների որոշակի տեսակներին: «Բնակարանային հարցերի արդար լուծման մասին» օրենքը (FHA) վերաբերում է պետական և մասնավոր բնակարաններին: Դուք կարող եք ներկայացնել HUD բողոք (800) 669-9777 (Հեռահաղորդակցման սարք լսողական անկարողություններ ունեցող անձանց համար (800) 927-9275) հեռախոսահամարով կամ [www.hud.gov](http://www.hud.gov) կայքում: FHA համաձայն՝ HUD բողոքը կարող է ներկայացվել իրադարձությունից հետո **մեկ տարվա** ընթացքում: Սակայն, 504-րդ Բաժնի համաձայն, բողոքը կարող է ներկայացվել իրադարձությունից հետո **180 օրերի** ընթացքում:

***Դատական գործի հայց ներկայացրեք***

Անկախ նրանից, թե Դուք բողոք եք ներկայացրել DFEH կամ HUD, Դուք կարող եք դատական հայց ներկայացնել նահանգային կամ դաշնային դատարան: **Դատական հայցը կարող է ներկայացվել իրադարձության ամսաթվին հաջորդող երկու տարիների ընթացքում:**

Որոշ բաներ, որոնք Դուք հնարավոր է ունենաք, ներառում են.

- a. օրդեր առ այն, որ Դուք կարող եք գնել կամ վարձակալել սեփականությունը,
- b. օրդեր առ այն որ Դուք ստանաք ողջամիտ հարմարեցումներ կամ ձևափոխություններ,

- c. Օրդեր առ այն որ տան տերը, վաճառողը կամ անշարժ գույքի վաճառքի գործակալը փոփոխի կանոնը,
- d. Վճարում կանխիկով ծախսերի համար, և (կամ)
- e. դրամական վնասներ:

### 3. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

Եթե հարցեր ունեք ըստ անկարողություններող մարդկանց բնակարանային հարցում խտրականությունից պաշտպանող նահանգային և դաշնային օրենքների ձեր իրավունքների կամ պարտավորությունների վերաբերյալ, կապվեք Disability Rights California-ի հետ:

Հեռ.՝ (800) 776-5746

Տեքստային էկրանով հեռախոս՝ (800) 649-0154

[www.disabilityrightsca.org](http://www.disabilityrightsca.org)

Ցանկանում ենք, որ կապվեք մեզ հետ: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք պատասխանել այս կարճ հարցաթերթին և մեզ հայտնել ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

*Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների մարմինը (CalMHSA)-ը օկրուզների կառավարությունների կազմակերպություն է, որը աշխատում է անհատների, ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջության հետ կապված հարցերի լուծումները բարելավելու համար: CalMHSA կողմից ֆինանսավորվող Կանխարգելման և վաղ միջամտության ծրագրերը ֆինանսավորվում են ընտրողների հաստատումը ստացած «Հոգեկան առողջության ծառայությունների մասին» օրենքի միջոցով (Նորմ 63): 63-րդ Նորմը նախատեսում է ֆինանսավորում և շրջանակ, որը հարկավոր է նախկինում ծառայություններով թերի ապահովված բնակչությանը և Կալիֆորնիայի զանազան համայնքներին հոգեկան առողջության ծառայությունները ընդլայնելու համար:*

